Շնորհաց և պաշտօն իշխանութեան. պաշտօնն երկրորդ խորհրդակցութեան 'ի ծածուկ խորհրդարանն պատուելի նախարարին հայոց, յիշեցուցանելով 'ի մէջ ամենայն խորհրդոյ անխախտելի յօրէնս հայոց. զի ամենայն գործ որ ելցէ 'ի ծածուկ խորհրդարանէ նախարարին հայոց անթերի համեմատեսցի ըստ Օրինօքն հայաստանեաց, նաև տուաք իշխանութիւն քեզ յարութիւնիդ կալ և մնալ 'ի վերայ աթոռի իշխանութեան խորհրդի զամենայն աւուրս կենաց քոյ, եթէ մի՛ իջուսցէ քեզ գործ ձեռաց քոց և բնական մահն քոյ, և պահեա՛ հաստատութեամբ 'ի մէջ սրտի քոյ հնազանդութիւնն քոյ Օրինաց և տանն հայոց, մի՛ լիցի խորհուրդ քոյ երբէք 'ի վերայ զոր ինչ բանի և գործոյ որ լցէ ընդ դէմ Օրինաց հայոց։ Այսպէս առ երրորդ և չորորդ մինչև երեքտասաներորդ խորհրդակիցս, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ և բարեվարք տանն հայոց այսմ աւուր յամսեանն յունվարի մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.

Սեղբեստրոս արք Եպիսկոպոս, Երկրորդ տանուտէր, ○

Միքայէլ իշխան, ○
Մանուէլ Գծագիր. ○

Վրթանէս կաղնոյ երրորդ տանուտէր, ○

Գալստան կաղզվանու չորորդ տանուտէր։ ○